ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 322-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով Սամվել Ռուբենի Հանեսյանի դիմումը, սեփականության իրավունքի N 12102020-06-0024 վկայականը, Ալավերդի համայնքի «Թիվ 1 ԲՇՏ» ՓԲ ընկերության կողմից 13.10.2020թ. տրված N 0-50 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

Ալավերդի քաղաքի Զորավար Անդրանիկ փողոցի հյուսիսային մասում գտնվող, Սամվել Ռուբենի Հանեսյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Զորավար Անդրանիկ փողոց, N 39 փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. հոկտեմբերի 14
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 323-Ա

06-002-0207-0013 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.06578 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԵՎ 06-002-0250-0019 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.1667 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով և հիմք ընդունելով Ռոբերտ Ռահիմի Դոլինյանի դիմումը, անձնագրի պատճենը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից տրված հողամասերի հատակագծերը, 01.04.1993թ. հողակադաստրային N 1 գրքից քաղվածքները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Վերականգնել Ռոբերտ Ռահիմի Դոլինյանին պատկանող, Ալավերդի քաղաքի Ակներ թաղամասում գտնվող, 0.06578 հա մակերեսով (ծածկագիր՝ 06-002-0207-0013) և 0.1667 հա մակերեսով (ծածկագիր՝ 06-002-0250-0019) բնակավայրերի բնակելի հողամասերի հողհատկացման հիմքերը, սեփականության իրավունքը:
2. Ռոբերտ Ռահիմի Դոլինյանին սեփականության իրավունքով պատկանող, Ալավերդի քաղաքի Ակներ թաղամասում գտնվող, 0.06578 հա մակերեսով հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Ակներ թաղամաս, փողոց 1, նրբանցք 4, N 13 փոստային հասցե:
3. Ռոբերտ Ռահիմի Դոլինյանին սեփականության իրավունքով պատկանող, Ալավերդի քաղաքի Ակներ թաղամասում գտնվող, 0.1667 հա մակերեսով

հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Ակներ թաղամաս, փողոց 11, փակուղի 2, N 5/2 փոստային հասցե:

4. Հողամասերը չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. հոկտեմբերի 14
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 324-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 03.06.2020Թ. N 128-Ա ՈՐՈՇՄԱՆ 1.7 ՄԱՍԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ 04.08.2020Թ. N 239-Ա ՈՐՈՇՄԱՆ 1.8 ՄԱՍՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 37-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 24-ի N 71-Ա որոշումը **ո ր ո շ ու մ է.**

1. Ալավերդի համայնքի ղեկավարի 03.06.2020թ. «Ալավերդու համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների անվանումները փոփոխելու և կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N 128-Ա որոշման 1.7 մասի՝ «Աքորու նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի անվանումը փոփոխել «Ալավերդի համայնքի Աքորի գյուղի թիվ 8 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ անվամբ նախադասությունը փոփոխել նոր՝ «Լոռու մարզի Աքորու մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի անվանումը փոփոխել «Ալավերդի համայնքի Աքորի գյուղի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ անվամբ նախադասությամբ:
2. Ուժը կորցրած ճանաչել Ալավերդի համայնքի ղեկավարի 04.08.2020թ. «Ալավերդու համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների անվանումները փոփոխելու և կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N 239-Ա որոշման 1.8 մասը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. հոկտեմբերի 14
ք. Ալավերդի